

ԾԱԾՐ ՄԵՏԱՆԱԼԵՐԻ ՏԵՂԱԾԱՐՁՅ ԵՎ ԿՈՒՏԱԿՈՒՄԸ ՀԻԴՐՈՊՈԽԱԿԱՅԻ
ՊՐՈՊԼԵՄԵՆԵՐԻ ԻՆՍԻՏՈՒՏԻ ԾՐՁԱԿԱ ՏԱՐԱԾՔԻ ՈՈՂԳԻՉ ԶՈՒՐ-ՀՈՂԻ-ԽՈՏԱԲՈՒՅԱ-
ԿՈՎԻ ԿԱԹ ՀԱՍԱԿԱՐԳՈՒՄ
(Դադուղում 2)*

Ներածություն: Տեխնածին գործոնների ազդեցության տակ ծանր մետաղների (ԾՄ) տեղաշարժման առանձնահատկությունների ուսումնասիրումը կենսոլորտի բաղադրամասներում ունի ոչ միայն գիտական, այլ նաև գործնական նշանակություն: Ծրջական միջավայրում էկոլոգիական լուրջ վտանգ են ներկայացնում հատկապես կենսաքաղաքացիության համար ակտիվ և բունավոր հետևայլ ԾՄ-ը՝ Hg, Pb, Cd, Co, Ni, Zn, Sn, Sb, Cu, Mo, V, Bi, Cr, Mn, As: Նշված ԾՄ-ից առավել թունավորներն են Hg-ը, Pb-ը, As-ը և Cd-ը: Առանձնապես մեծ վտանգ է ներկայացնում ԾՄ-ի կուտակումը մարդու կողմից օգտագործվող սննդամթերքներում, քանի որ դրանք կարող են զանազան հիվանդությունների առաջացման պատճառ հանդիսանալ (1-4): Դաշվի առնելով այս կարևոր հանգամանքը, մեր կողմից ուսումնասիրվել է Հիդրոպոխիկայի պրոբլեմների ինստիտուտին (ԴՊԻ) հարող Քրազդան գետի ջրով ոռոգվող հողեղում, խոտարույսերում և այդ խոտարույսերով սնված կովերի կարում ԾՄ-ի (Fe, Mn, Ni, Ti, V, Cr, Mo, Co, Cu, Pb, Ag, Sb, Sn, Zn, Cd) տեղաշարժի և կուտակման առանձնահատկությունները:

Նյութ և մեթոդ: Ներկայացված է «Դադուղում 1-ում»: ԾՄ-ի պարունակությունը որոշվել է էնիսին սպեկտրոլ եղանակով՝ ԴՓС-13 սպեկտրոգրաֆի կիրառմամբ (5): ԾՄ-ի տվյալները համեմատվել են սահմանաթույլատրելի խոտությունների հետ (Աթև) (1-4):

Աղյուններ և բնարկում: Ուսումնասիրության արդյունքները ցույց են տվել, որ ԾՄ-ի կուտակման և տեղաբաշխման բնույթը ոռոգիչ ջուր-հող-խոտարույս-կովի կաթ համակարգի օղակներում տարբեր է (աղ.1):

Աղյուսակ 1

ԾՄ-ի պարունակությունը ոռոգիչ ջուր - հող - խոտարույս - կովի կաթ համակարգում, 2005թ.

ԾՄ	Ոռոգիչ ջուր, մգ/լ	Հող, մգ/կգ	Խոտարույս, մգ/կգ	Կովի կաթ, մգ/լ	Սթև, ջրում, մգ/լ	Կլարկ
Fe	0,76	32000	3000,0	16,3	0,1	46000
Mn	0,05	420	52,5	0,11	-	850
Ni	0,017	130	40,0	0,21	0,1	40
Co	0,03	100	12,5	չի հայտնաբերվել	-	10
Ti	0,41	3200	40,0	0,9	0,1	4500
V	0,013	56	7,0	0,2	0,1	15
Cr	0,007	100	12,5	0,2	0,5	100
Mo	0,004	10	1,6	0,09	0,25	3,0
Cu	0,01	32	4,0	0,2	0,01	60
Pb	0,0017	42	0,7	չի հայտնաբերվել	0,1	30
Zn	0,0047	13	1,6	0,09	-	83
Ag	0,00017	0,56	0,07	չի հայտնաբերվել	-	0,1
ԾՄ-ի գումարը	1,3075	33185,7	3532,4	18,33	-	-

* Աշխատանքը կատարվել է ՀՀ ԳԱԱ թթակից անդամ Ս.Խ.Մայրապետյանի առաջարկած ծրագրով:

Այսպես, թեև ոռոգիչ ջրարհող-խոտաբույս շղթայում Co-ի, Ag-ի, Pb-ի առկայությանը, կովի կարում դրանք չեն հայտնաբերվել: Աղ.1-ի տվյալներից պարզվել է նաև, որ համակարգի բոլոր օղակներում բացակայում են կենսաբանորեն ակտիվ և բուճավոր Cd-ը, ինչպես նաև Sb-ը և Sn-ը: Էկոլոգիապես հատկապես շահեկան է կովի կարում թուճահարույց հատկություններով օժտված Cd-ի և Pb-ի բացակայությունը: Միաժամանակ մտահղացի է կովի կարում Fe-ի և Cu-ի Սթեն-6 գերազանցող քանակի առկայության փաստը (աղ.2): Դայտնի է (3), որ կովի կարում, թթվասերում և պանրում Fe-ը, ըստ պարունակության, կազմում է հետևյալ նվազող շարքը՝ կաթ>թթվասեր>պանիր, իսկ Cd-ը և Pb-ը հետևյալ աճող շարքը՝ կաթ>թթվասեր<պանիր: Սա պայմանավորված է կաթի կաթում կամ մամնատ թթվասերում, թթվասերի համեմատ պանրում սպիտակուցի խոտաբույս մեծացման հետ: Ինչպես հայտնի է Cd-ը և Pb-ը հիմնականում կապվում են սպիտակուցի հետ (3): Դաշվի առնելով, որ մեր կողմից ուսումնասիրված կովի կաթից ստացված պանրում Fe-ի պարունակությունը անհամեմատ ցածր կլինի (մոտ 2 անգամ), քանի կարում եր, կարելի է եղրակացնել, որ էկոլոգիապես ավելի շահեկան կլինի պանիր օգտագործումը: Տվյալ դեպքում պանրում Cd-ի և Pb-ի կուտակման վտանգ չի սպառնում, քանի որ կովի կարում դրանք չեն հայտնաբերվել (աղ.1):

Ներկայումս ջրային էկոհամակարգի ԾՄ-ով աղտոտման խնդիրը գնալով ավելի հրատապ է դառնում: Բնական ջրամբարների ԾՄ-ով աղտոտման աղբյուր կարող են ծառայել արդյունաբերական հոսքաջրերը, մենալորտը, հողի մեջ ջիմիկատների, այդ թվում պարարտանյութերի ներմուծումը: Բացի դրանից, ջրային էկոհամակարգերում ԾՄ-ի բարձր պարունակությունը կարող է պայմանավորված լինել նաև տարածաշրջանի երկրացիմիական առանձնահատկություններով (6-7):

Ըստ մեր 2002-2004թթ. ուսումնասիրությունների տվյալների, ԴՊԻ-ի տարածքով անցնող առվի ջրում ԾՄ-ի զնդիհանուր քանակը կազմել է 1,0720 մգ/լ, իսկ ահա՝ 2005թ-ին՝ 1,3075 մգ/լ (աղ.1): Սա վկայում է Դրազդան գետի ջրերի ԾՄ-ով աղտոտվածության մեծացման բացասական բիտման մասին: Ընդ որում, առվի ջրում ավելացել է էկոլոգիապես մեծ վտանգ ներկայացնող ԾՄ-ի Ni, Cr, Zn պարունակությունը, իսկ էկոլոգիապես չափավոր վտանգ ներկայացնող Fe-ի պարունակությունը գերազանցել է Սթեն-6: Ինչպես հայտնի է, քաղաքային հողերն անընդհատ գոնվում են զանազան մարդածին գործոնների (ավտոտրանսպորտ, արդյունաբերական գործարաններ և այլն) համատեղ ներգործության տակ: Դամենատության համար ներկայացվում են նաև Սիջին Ուրալում գտնվող, աղնձահալման գործարան ունեցող Ուլուա քաղաքի հողերում որոշ ԾՄ-ի պարունակության տվյալները: Քաղաքային հողերում Cu-ի (15,9 անգամ), Zn-ի (6,3 անգամ), Co-ի (4,0 անգամ), Pb-ի (2,8 անգամ), Mn-ի (1,8 անգամ) պարունակությունը գերազանցել է դրանց ֆոնային քանակին, որը վկայում է այդ հողերի նշանակած ԾՄ-ով տեխնածին աղտոտվածության մասին (8-9): Աղ.1-ի տվյալներից ակնհայտ է, որ ԴՊԻ-ի շրջակա հողերը նույնական աղտոտված են որոշ ԾՄ-ով: Այսպես, Ag-ի (5,6 անգամ), Co-ի (10 անգամ), V-ի (3,7 անգամ), Mo-ի (3,3 անգամ), Ni-ի (3,2 անգամ) և Pb-ի (1,4 անգամ) պարունակությունը հողերում գերազանցում է դրանց բնական քանակն արտահայտող կլարկի ցուցանիշը:

Դամաձայն որոշ հետազոտողների (10), կերարուսերում բավարար են համարվում ԾՄ-ի հետևյալ քանակները՝ /մգ/կգ չոր նյութում/ Cu-5-10, Co-0,2-0,5; Mn-30-60; Mo-2-3: Ուրիշները (11) գտնում են, որ Co-ի անվտանգ քանակությունը կերարուսերում չպետք է գերազանցի 60 մգ/կգ քանակը: Այլ հետազոտողների (12) կարծիքով կերարուսերի համար պոտենցյալ վտանգ են ներկայացնում հատկապես Pb-ը, Ti-ը, Mn-ը և Zn-ը: Սովորաբար Ti-ի պարունակությունը կերարուսերում տատանվում է 0,15-80 մգ/կգ, իսկ Pb-ը՝ 0,1-10 մգ/կգ սահմաններում (4): Ներկայացված տվյալները համեմատելով աղ. 1-ի տվյալների հետ, կարելի է եղրակացնել, որ խոտաբույսերում Pb, Ti, Cu, Co, Mn, Mo ԾՄ-ը գտնվում են թույլատրելի քանակով: Այսիսկ թեև Co-ը, Pb-ը, Mo-ը ԴՊԻ-ի շրջակա հողերում գտնվում են կլարկի ցուցանիշը գերազանցող քանակով, սակայն դրանց

պարունակությունը խոտարույսերում չի գերազանցում թույլատրելի քանակները: Այստեղ տեղին է մեր ստացած տվյալները համեմատել ուրիշ հեղինակների (13) կողմից Երևանի հյուսիս արևելյան շրջանում վայրի աճող կերարույսերում ԾՄ-ի պարունակության տվյալների հետ: Պարզվել է, որ վայրի աճող կերարույսերը Zn-ի (1,8 անգամ) և Cu-ի (1,6 անգամ) պարունակությամբ գերազանցել, իսկ Mn-ի, Ni-ի, Ti-ի, Co-ի, Mo-ի և հատկապես Fe-ի պարունակությամբ զիջել են Երևանի հարավ արևմտյան մասում գտնվող ՇՊԻ-ի շրջակայի կերարույսերին: Ըստ Երևանյան, կերարույսերում Fe-ի կուտակումը հետևանքը է ոռոգման ջրում դրա ՍԹԽ-ն գերազանցող քանակի առկայությանը, քանի որ ՇՊԻ-ի շրջակա հողերն աղնոտված չեն Fe-ով (աղ. 1), որն էլ իր հերթին պատճառ է հանդիսացել կովի կաթում Fe-ի ՍԹԽ-ն գերազանցող քանակի առկայության (աղ. 2):

Աղյուսակ 2

Որոշ ԾՄ-ի ՍԹԽ-ն և պարունակությունը կովի կաթում, մկգ/գ չոր նյութում, 2005թ.

ԾՄ	ԾՄ-ի պարունակությունը կովի կաթում	ՍԹԽ
Fe	125	3,0
Cu	1,55	1,0
Zn	0,69	5,0
Cd	չի հայտնաբերվել	0,03
Pb	չի հայտնաբերվել	0,1

Մեր հաշվարկը ցույց է տվել, որ խոտարույսերում ԾՄ-ից ամենամեծ կուտակման գործակցով (ԿԳ) աչքի է ընկել Ni-ը ($ԿԳ = 0,3$), ամենափոքր ԿԳ-ով Ti-ը ($ԿԳ = 0,012$) և Pb-ը ($ԿԳ = 0,016$): Թեև Mn, Co, V, Cr, Cu, Zn, Ag ԾՄ-ի պարունակությունը հողում բավականին տարբեր է, սակայն դրանք չեն տարբերվում ԿԳ-ի արժեքով, որն հավասար է 0,12: Կարելի է ենթադրել, որ տեղի է ունեցել օդային ավազանից հատկապես Ni-ի արտարմատային ներթափանցում խոտարույսերի մեջ, որի հետևանքով դրա ԿԳ-ի արժեքը 2,5-25 անգամ գերազանցում է մնացածներին: Բացահայտվել է նաև, որ ԾՄ-ի փոխանցման շղթայի առանձին օղակներում այն, ըստ պարունակության, կազմում է հետևյալ շարքը՝ հող>խոտարույս>կովի կաթ: Այսպես, 1 կգ օդաչոր խոտարույսը 9,4 անգամ պակաս քանակով ԾՄ է պարունակել, քան 1 կգ հողը և մոտ 193 անգամ ավելի քանակով գերազանցում է 1լ կաթում պարունակված ԾՄ-ի քանակին: Ըստ որում, կովի կաթում ԾՄ-ի ԿԳ-ը (որը պայմանական բնույթ է կրում) տատանվում է 0,002-0,056 սահմաններում: Կովի կաթում ամենամեծ ԿԳ-ով առանձնանում են Mo-ը և Zn-ը ($ԿԳ=0,056$), ամենափոքր ԿԳ-ով՝ Mn-ը ($ԿԳ = 0,002$): Ti-ի, V-ի, Cr-ի ԿԳ-ը միջանկյալ դիրք է գրավում ($ԿԳ=0,016-0,028$):

Եղանակացություններ:

1. Կովի կաթում պարունակված ԾՄ-ի ընդհանուր գումարի 88,92 %-ը կազմում է Fe, 1,09 %-ը՝ Cu, 2,67 %-ը՝ Mn, Co, V, Mo, Zn կենսամետաղները, իսկ 2,72 %-ը՝ Ti-ը, Ni-ը և Cr-ը:

2. Կովի կաթը որոշ ԾՄ-ի (Sn, Sb, Ag, Co, Zn), այդ թվում նաև առավել թունավորների (Cd, Pb) պարունակությամբ էկոլոգիապես մաքուր է:

Ghalachyan L.M., Kocharyan K.A., Avetisyan M.M., Tadevosyan L.S.

**Migration and accumulation of heavy metals in the irrigation water-soil-herb-cow milk system in the area of the Institute of Hydroponics Problems
(Communication 2)**

Summary

The characteristics of accumulation of heavy metals in the irrigation water-soil-herb-cow milk system in the area of the Institute of Hydroponics Problems have been observed. It has been proved that Fe and Cu have surpassed the Maximum Allowed Concentration Limit. In the total sum of heavy metals Fe is 88,92%, Cu-1,09%, Mn, Co, V, Mo, Zn biometals are 2,67 %, and Ni, Ti, Cr-2,72%. By the content of these HM (Cd, Pb, Sn, Sb, Ag, Co, Zn) the cow milk is ecologically clear.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Рыбальский Н.Г., Жакетов О.Л., Ульянова А.Е., Шепелев Н.П. Экологические аспекты экспертизы изобретений.- М.: ВИНИТИ, 1989, ч.1, с. 403-407.
2. Хожина Е.И., Кропачева М.Ю. ТМ в биокомпонентах сульфидных гидроотвалов г.Салаира.-Мам. IV респуб. молодежной научной конференции. Ереван, 2003, с. 201-206.
3. Школьник М.Я. Микроэлементы в жизни растений.-Л.: Наука, 1974, 324 с.
4. Dyeck T.A. et . all. Heavy Metal immision and Genetic Constitution of plant populations in the Vicinity of Two Metal emission Sources.-Andrew Bot. 1984, vol.58, 1, p.47-53.
5. Кустанович И.М. Спектральный анализ.-М.: 1972, 390 с.
6. Малева М.Г., Некрасова Г.Ф., Безель В.С. Реакция гидрофитов на загрязнение среды тяжелыми металлами.-Экология, 2004, #4, с.266-272.
7. Мур Дж., Рамамурти С. Тяжелые металлы в природных водах. Контроль и оценка влияния.- М.: Мир,1987,288 с.
8. Мещеряков П.В., Прокопович Е.В., Коркина И.Н. Трансформация экологических условий почвообразования и формирования гумусовых веществ под влиянием урбогенеза.-Экология, 2005, #1, с.11-19.
9. Капелькина Т.В., Бардина Л.Г. Особенности городских почв и их устойчивость к деградации. Устойчивость почв к естественным и антропогенным воздействиям.- Тез. докл. Всеросс. конф. /24-25 апр. 2002 г / М.: Почвенный ин-т им. В.В.Докучаева РАСХН, 2002, с.99.
10. Казарян Е.С, Сухова-Петросян. Ритмы развития разнотравно-злаковой степи. Биол. ж. Армении, 1973, т.26,#4,с.17-22.
11. Case A.A, Sellby L.A., Hutcheson D.P., Ebens R.S., Erdman J.A., Feder G.L. Infertility and growth suppression in beef cattle associated with abnormalities in their geochemical environment./Trace Subst. Environ. Health,1972, v.6, Columbia, p.15.
12. Bowen H.J.M. Environmental Chemistry of the Elements-NY: 1979, Academic Press., p.333.
13. Межунц Б.Х., Араматян Л.А., Оганесян А.С., Кандарян А.Н. Содержание биоэнергии и тяжелых металлов в кормовых растениях окрестности г. Еревана.-Мам. 4 респуб. молод. научной конференции "21 век: экологическая наука Армении. Проблемы экологии городов", Ереван, 2003, с.190-196.